ԹԱՓՈՆՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅԱՄԱՆԱԳԻՐ № 39

ք. Երևան 01.03.2021թ.

«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Խ. Մողրովյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյանի՝ մյուս կողմից, միասին՝ «Կողմեր», կնքեցին սյուն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅԱՄԱՆԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն պայմանգրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ա) թափոնների դուրս բերում և ոչնչացում՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված թափոնները բեռնատար ավտոմեքենայով դուրս են բերում տվյալ հաստատությունից և այրվում լիցենզավորված գործարանում,

բ) պայամանագիր՝ սույն պայմանագիրը,

գ) թափոն՝ դեղորայք և այլ ապրանքներ,

դ) ոչնչացում՝ դեղորայքի և այլ ապրանքների ոչնչացում «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊ ընկերությանը պատկանող հատուկ թափոնների այրման համար նախատեսված լիցենզավորված գործարանում,

ե) թափոնների դուրս բերում՝ Պատվիրատուի հաստատության տարածքից՝ թափոնների դուսր բերումը Կատարողի հատուկ մասնագիտացված մեքենայի միջոցով,

զ) կողմ՝ Պատվիրատուն կամ Կատարողը,

է) ծառայություն՝ թափոնների դուրս բերում և ոչնչացում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

2.1. Պայմանագիրը մեկնաբանում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

2.2. Պայմանագիր վերնագրերը չեն կարող օգտագործվել Պայամանգրի բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանության համար:

3. ՊԱՅԱՄԱՆԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

3.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել պայմանագրի 3.2. կետով սահմանված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

3.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հասցեում գտնվող հաստատությունից թափոնները դուրս բերել և ոչնչացնել:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1. Ստուգել Կատարողի կողմից ծառայությունների կատարման ընթացքը՝ առանց միջամտելու նրա գործողություններին,

4.1.2. Պահանջել վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը՝ Պայմանագրի 8-րդ մասում նշված կարգով:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1. Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրի 5-րդ գլխում նախատեսված կարգով, ժամկետներում և գումարի չափով,

4.2.2 Որևէ կերպ չխոչընդոտել Կատարողի գործողություններին,

4.2.3. Իր հաստատության տարածքում սենյակ կամ տարածք տրամադրել Կատարողին, որտեղից պետք է իրականացվի թափոնների դուրս բերումը,

4.2.4. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում չնախաձեռնել թափոնների այրման սեփական գործարանի (արտադրամասի, հնոցի կամ վառարանի) կառուցում,

4.2.5. Երաշխավորել իր հաստատության թափոնների ոչնչացումը՝ Պայմանագրով նախատեսված կարգով,

4.2.6 Բարեխղճորեն կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

4.3. Կատարողն իրավունք ունի՝

4.3.1. Պահանջել Պատվիրատուից արդեն իսկ կատարված ծառայության վճարը, եթե վերջինս, առանց Պայմանագրով սահմանված հիմքերի, հրաժարվում է տրամադրել թափոնները:

4.4. Կատարողը պարտավոր է՝

4.4.1. Թափոնները ոչնչացնել միայն այրման միջոցով, որևէ այլ՝ երկրորդական մշակման չենթարկել,

4.4.2. Կատարել թափոնների դուրս բերման այցեր Պատվիրատուի պահանջով:

4.5. Եթե ոչնչացման ենթակա դեղորայքների ցանկում առկա են ՀՀ տարածքում հաշվառված թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղորայքներ, ապա ոչնչացման ժամանակ ուղղորդվել ՀՀ Կառավարության 18.03.2010թ. №270-ն որոշման 29-րդ կետի համաձայն:

5. ՊԱՅՄԱՆԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի կնքման պահին յուրաքանչյուր 1կգ քաշի թափոնի դուրս բերման և այրման միջոցով ոչնչացման համար Պատվիրատուն Կատարողին պետք է վճարի՝

ա) ոչնչացման ենթակա դեղորայք - 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:
բ) այլ թափոններ - 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:

5.2. Պատվիրատուն և Կատարողը՝ սկսած Պայմանգրի կնքման օրվանից, ամիսը մեկ անգամ կատարում են հաշվարկ՝ Պատվիրատուի հաստատությունից թափոնների քաշի հաշվարկման և դրա դիմաց Կատարողին վճարվելիք գումարի համար, որի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ:

5.3. Պատվիրատուն Պայմանգրի 5.2. կետով սահմանված հաշվարկված գումարը Կատարողին պետք է վճարի հաշվարկից հետո՝ 15-օրյա ժամկետում:

5.4. Պայմանգիր 5.1. կետում նշված գումարը,անհրաժեշտության դեպքում, ենթակա է վերահաշվարկման՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.5. Հարկային վճարների փոփոխության դեպքում Կատարողը պարտավորվում է Պայմանագրի 5.1. կետում նշված գումարի չափի փոփոխման մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին: Հարկային վճարների աճի դեպքում 1կգ քաշի նոր արժեքի հիման վրա հաշվարկված վճարի չափը ենթակա է կիչառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացնելուց 15 օր անց:

5.6. Պատվիրատուն իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.7. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

6.2. Պայմանագիրը գործում է կնքման օրվանից մինչև 01.03.2022թ. ներառյալ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պայմնագրի ստորագրման պահից հետո Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում թափոնների դուս բերման և այրման միջոցով ոչնչացման համար:

7.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում թափոնների դուրս բերման համար նախատեսված տարրաների պարունակության համար:

8. ՊԱՅԱՄՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1. Պայմանագիրը միակողմանի կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին առնվազն 3 ամիս առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Կեղմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ ընդհանուր հայտարարի չգալու դեպքում՝ դատական կարգով:

10. ԱՆՀԱԽԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ- ՄԱԺՈՐ)

10.1. Պայմանգրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժ ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո, և, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

10.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2(երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՀՄԱՆՆԵՐԸ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարող	Պատվիրատու
«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Հասցե՝ ք. Էջմիածին Վ. Կոստանյան 8գ Գործ. հ ք. Էջմիածին Մարգարյան խճ. 4/1 Հեռախոս՝ /077/066-90-81, /077/066-90-80 Էլ. հասցե՝ ekovkh@gmail.com Ekologoavkh.ucoz.com Բանկային տվյալներ «ՎՏԲ- Յայաստան Բանկ» Էջմիածին մ/ճ Հ/Հ՝ 16017038839300 ՀՎՀՀ՝ 04719486	Հասցե՝ ք. Երևան 0078, Հալաբյան 41ա Հեռախոս՝ 060-713-470 Բանկային տվյալներ Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ՝ 900011288025 ՀՎՀՀ՝ 01223338
Տնօրեն՝ Խ. Մողրովյան	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյան
Ստորագրություն՝ _____	Ստորագրություն՝ _____